

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1.Ձրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1418.5 հազ. մարդ, որոնց 90.4%-ը կամ 1282.5 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 9.6 %-ը կամ 136.0 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար)՝ չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2002թ. հուլիսի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած են եղել 158.7 հազ. աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.2%-ը կամ 157.5 հազարը՝ չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 84.6%-ը կամ 133.3 հազ. մարդ:

2002թ. հուլիսին վերը նշված ծառայության կողմից հաշվառման է վերցվել 1.9 հազ. մարդ, որից 1.3 հազ.-ը կամ 68.4%-ը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 2.2 հազ. մարդ, որից 30.1%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2002թ. հուլիսին¹

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը		Նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	%- ով՝ նախորդ տարվա հուլիսի նկատմամբ	ընդամենը, հազ. մարդ	%-ով՝ նախորդ տարվա հուլիսի նկատմամբ
Ընդամենը	158.7	93.7	133.3	91.7
Արագածոտն	2.2	104.8	1.5	93.8
Արարատ	6.9	88.5	5.5	87.3
Արմավիր	8.6	82.7	6.2	79.5
Գեղարքունիք	8.9	91.8	6.6	97.1
Լոռի	25.5	103.7	21.3	100.0
Կոտայք	9.8	78.4	7.4	74.7
Շիրակ	33.8	100.9	29.0	98.6
Սյունիք	16.4	101.9	13.7	100.0
Վայոց ձոր	2.1	105.0	1.7	100.0
Տավուշ	4.6	93.9	3.9	90.7
ք.Երևան	39.9	87.1	36.5	85.7

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 66.5%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2001թ. հուլիսի նկատմամբ աճել է 1.0 %-ով:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2002թ. հուլիսի վերջին կազմել է 963 մարդ, այդ թվում՝ 81.4%-ը կամ 784-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով:

2002թ. հուլիսին «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 661 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 164 չզբաղված մարդ:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2002թ. հուլիսին կազմել է 6.6 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3258 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն է ստացել 13.3 հազ. գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1483 դրամ:

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2002թ. հուլիսին կազմել է 9.4% և 2002թ. հունիսի համեմատությամբ նվազել 0.1%-ով, իսկ 2001թ. հուլիսի նկատմամբ՝ 0.8%-ով: